ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտություն է առաջացել ընդունել ««Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը:

««Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է, հիմք ընդունելով ««Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունից: Օրենքի ամբողջ տեքստում անհրաժեշտ է «հավաքական թիմ» բառերը իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «հավաքական» բառով իր բոլոր հոլովաձևերով: Օրենքում «հավաքական թիմ» արտահայտությունը տեղ է գտել հիմք վերցնելով սովետական, այնուհետև ռուսական գրականության համապատասխան սպորտային տերմինաբանությունից և Օրենքը մշակելիս «հավաքական թիմ» այսինքն «сборные команды» արտահայտությունը բոլոր հոդվածներում տեղ է գտել որպես բառացի թարգմանություն: Սակայն պետք է նշել, որ մարզիկներով, մարզիչներով, բշժիշկներով, գիտնականներով, հոգեբաններով և այլ մասնագետներով համալրված թիմը արդեն իսկ նշված մասնագետներով համալրված հավաքական է:

Համաձայն ՀՀ Վարչապետի մոտ 2023 թվականի ապրիլի 22-ին կայացած խորհրդակցության N Վ/84-2023 արձանագրության 3-2.4 կետի պահանջներով սահմանված հանձնարարարկանի «Հայաստանի Հանրապետության մարզերում այդ թվում Հայաստանի Հանրապետության մարզում երեխաների և մեծահասակների համար լողավազան, **ֆիթնես** և տարբեր մարզաձևերի դասավանդման ենթակառուծվածնքների ներառող մարզահամալիրի համար նախատեսել նմանատիպ մարզական կենտրոնների կառուցումը» անհրաժեշտություն է առաջացել մարզերում զարգացնել և մասսայականացնել ֆիթնես ծրագրերը:

Հանձնարարականի պահանջից ելնելով անհրաժեշտ է Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել «զ.1» կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «մարզառողջարարական - ֆիթնես մարզասրահներում անկախ սեփականության ձևից աշխատող մարզիչների պատրաստում, վերապատրաստում և արտոնագրում՝ համաձայն լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի», որով իրավունք է տրվում, անկախ սեփականության ձևից աշխատող մարզիչներին պատրաստում, վերապատրաստում անցած արտոնագրման համաձայն Հայաստանի Հանրապետության մարզերում ֆիթնեսի մարզումներ անցկացնելու համար և դրանցից բխող անհրաժեշտություն առաջացել է մշակել ֆինանսավորման կարգ պետական բյուջեից մարզական կազմակերպություններին ֆինանսավորման համար: Պետական կառավարման լիազորված մարմինը կարող է ֆիզիկական կուլտուրայի և մարզական ենթակառուցվածքների կառավարման ուղղությամբ համագործակցել մասնավոր ոլորտի հետ՝ պետություն մասնավոր համագործակցության շրջանակներում կնքելով համապատասխան հուշագիր:

Մարզերում մասնավորի կողմից շահագործվող մարզաառողջարարական-ֆիթնես մարզասրահներն ու լողավազանները կարող են դիմել և սահմանված չափորոշիչներին համապատասխանելու դեպքում ստանալ հաշվարկով ֆինանսավորում պետության միջոցներից՝ կառավարության սահմանած կարգի համաձայն:

Մեկ անձի մեկ ամսվա վճարը կազմում է 12000 ՀՀ դրամ, իսկ ինն ամսվա վճարը կազմում է 108000 ՀՀ դրամ, որն էլ մեկ անձի համար սահմանված գինը առաջացել է հանրապետության մասնավոր լողավազաններից արված գնահարցումների արդյունքում հաշվարկված միջին թվից: Սակայն հաշվի առնելով, որ կազմակերպությունների ընտրությունը նախատեսվում է իրականացնել նախարարության կողմից հայտարարված մրցույթին դրամաշնորհի միջոցով, հենց դրամաշնորհային մրցույթի ընթացքում էլ հստակ կձևավորվեն գները:

Հիմք ընդունելով միջազգային օլիմպիական կոմիտեի (Այսուհետ՝ ՄՕԿ) կողմից կարատե, քիք-բոքսինգ և մուայթայ մարզաձևերի ճանաչումը և ընդգրկում որպես **ՄՕԿ-ի կողմից ճանաչված մարզաձևերի ցանկում**, և այն հանգամանքը, որ 2023 թվականին նշված ֆեդերացիաները ընդգրկված են եղել պետության կողմից դրամաշնորհի ձևով պետական աջակցության ծրագրում՝ անհրաժեշտություն է առաջացել Օրենքում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ:

«Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու, կարատե, քիք-բոքսինգ, մուայթայ և շախմատ մարզաձևերից) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում (նաև հաշմանդամների), Եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում, Եվրոպայի օլիմպիական երիտասարդական փառատոնում, համաշխարհային ունիվերսիադայում, պատանեկան օլիմպիական խաղերում, շախմատի պատանեկան օլիմպիադայում, Ռազմական սպորտի միջազգային խորհրդի՝ զինվորականների համաշխարհային խաղերում, զինվորականների աշխարհի առաջնություններում, զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց համաշխարհային խաղերում և զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց աշխարհի առաջնություններում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին, բժիշկներին շնորհվող դրամական մրցանակների չափերի ու շնորհման կարգի»:

2023 թվականի Եվրոպական խաղերից Հայաստանի կարատեի և մուայթայ հավաքականները նվաճել են երկու բրոնզե մեդալ, որտեղ անհրաժեշտություն կար մրցանակային տեղ գրաված մարզիկներին, անձնական մարզիչներին, հավաքականի գլխավոր, երկրորդ մարզիչներին և բժիշկներին ընդգրկել տարեվերջյան միանվագ պարգևատրման ցուցակներում: Սակայն չկար համապատասխան լիազորող նորմեր:

Նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» N

2145-Լ որոշման 37-րդ կետի (Ռազմավարական ուղղություններ) 1-ին ենթակետը. (նախատեսվել է պլանավորել, ըստ տարիների, հանրապետության մարզերում պարտադիր կառուցվող մարզահամալիրների ցանկը: Յուրաքանչյուր խոշորացված համայնքում մեկնարկել տիպային մարզակառույց, որը անպայման, պետք է ներառի լողավազան և ֆիթնես սրահ), Ռազմավարության գործողությունների պլանի Մասնավոր նպատակ 1.1-ի Գործողություն 5-ը՝ «Մեկնարկել խոշորացած համայնքներում լողավազան և ֆիթնես սրահ անպայմանորեն ներառող տիպային մարզակառույցի կառուցման գործընթաց»: Ինչպես նաև հիմք է ընդունվել «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ը՝ մեջբերում. «Առողջ ապրելակերպը դարձնենք ազգային հատկանիշ, կյանքի սպասվող տևողությունը հասցնենք 90 տարվա»:

Ռազմավարության գործողությունների պլանի Մասնավոր նպատակ 1.1 գործողություն 5 մեկնարկել խոշորացած համայնքներում լողավազան և ֆիթնես սրահ անպայմանորեն ներառող տիպային մարզակառույցի կառուցման գործընթաց:

Նախագիծը մշակել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչությունը:

Նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: